ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 04 >> 11 2011թ. N: 132 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ N1 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>, <<ԳՅՈՒՄՐՈՒ N2 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>, <<ԳՅՈՒՄՐՈՒ N26 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>, <<ԳՅՈՒՄՐՈՒ N37 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <<Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն ավագ դպրոցների լիազոր մարմին ճանաչելու և նրան լիազորություններ վերապահելու մասին>> N19-Ն որոշման 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 2-ի N 774-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի, որոշմամբ հաստատված <<Ավագ և հիմնական դպրոցների ցանկի>> 8-11-րդ կետերի դրույթներով.

1. Ձևավորել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու N1 ավագ դպրոց>>, <<Գյումրու N2 ավագ դպրոց>>, <<Գյումրու N26 ավագ դպրոց>>, <<Գյումրու N37 ավագ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայությանը հանձնելու հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ ապահովել համապատասխան տեղեկանքների նախապատրաստման և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից ստեղծված ընդունող հանձնաժողովին հանձնման աշխատանքների իրականացումը և երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն իրականացված գործընթացների վերաբերյալ:

3. Կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սահակ Մինասյանին:

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետի 2011 թվականի Դեկտեմբերի 4-ի
թիվ 132 կարգադրության

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ N1 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>, <<ԳՅՈՒՄՐՈՒ N2 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>, <<ԳՅՈՒՄՐՈՒ N26 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>, <<ԳՅՈՒՄՐՈՒ N37 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Մակար Մելքոնյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ, նախագահ,

2. Գեորգ Ղումաշյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,

3. Արմեն Դավթյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,

4. Վարդան Սահակյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ, անդամ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ՊՈՂՈՍՅԱՆ